# «ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «№1 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՓԱԿԱՆՆԵՐԻ PK-1,2 ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՈԳՈՒՄ՝ ՇԱՐՔԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՄԲ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-14/26-03/27

«ՀԱԷԿ» ՓԲԸ (ԳՀԲ) 03/27 ЗАО «ААЭК» (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«30» 04. 2026թ. 20 թ

ք. Մեծամոր

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ - ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 05.05.2025 թվականին տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

**«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Արմեն Մուրադյանի, որը գործում է «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«№1 էներգաբլոկի պահուստային կարգավորիչ փականների PK-1,2 հիմնական նորոգում՝ շարքից դուրս եկած դետալների փոխարինմամբ» ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ. ընդունած որոշման հիման վրա, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 **Պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ. ընդունած որոշման հիման վրա, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կատարողի կողմից վերը նշված փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն չի երաշխավորում 50 օրում անցագրերի տրամադրումը:**

2.4.5 **Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:**

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **4 620 000 (չորս միլիոն վեց հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 770 000 ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն՝ այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական

գործակային, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Սույն պայմանագրի ստորագրմամբ Կատարողը հաստատում է, որ ծանոթացել է գնման ընթացակարգի իրավերին կից հրապարակված «Կոռուպցիոն բնույթի փաստերի և կասկածների մասին տեղեկացնելու ընթացակարգի վերաբերյալ» Հուշաթերթին:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

**Հասցե:** ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 0910
**ՀՎՀՀ:** 04401874
**Հ/Հ:** 1930000199200100
**Բանկ:** «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան
**Հեռ.** (+374 10) 28-18-80, 20-04-91, 28 29 60
**E-mail:** anpp@anpp.am

**ԳՏՏ - ԸՀԳՏ**

........................ **Ա. Մաթևոսյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ**

**Հասցե:** ՀՀ, ք. Երևան, Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցք 5-22
**ՀՎՀՀ:** 00933437
**Հ/Հ:** 220463334148000
**Բանկ:** «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ
**Հեռ.:** +374 (33) 22-03-80
**E-mail:** gnumner@voltamper.am, info@voltamper.am

**Տնօրեն**

........................ **Ա. Մուրադյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

*Պայմանագրի կառավարիչ՝ Աշոտ Գրիգորյան*
*Հեռ. 010-28-29-60*
*Email. ashot.grigoryan@anpp.am*

Հավելված N 1
«30» 04 2026թ. կնքված
N «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-14/26-03/27» ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր քանակը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50511400 | ***№1 էներգաբլոկի պահուստային կարգավորիչ փականների РК-1,2 հիմնական նորոգում՝ շարքից դուրս եկած դետալների փոխարինմամբ*** | *Կողային կարգավորող փականների հիմնական նորոգման ծառայությունը կապարել համաձայն ծավալաթերթի՝ հաստատված ՀԱԷԿ-ի ԳՃ-ի կողմից առ 09.01.2026թ.* | *դրույթ* | 1 | ***4 620 000*** | *Արմավիրի մարզ ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ* | Ծառայությունը մատուցել **ՊՆՎ 2026-ի ընթացքում** (ապրիլ-օգոստոս 2026թ.) առավելագույնը **60 օրացուցային օրում:** Ծառայության մատուցման սկիզբ է համարվում՝ պայմանագրի կնքումից հետո համապատասխան **մուտքի թույլտվություն ստանալու հաջորդող աշխատանքային օրը, սակայն ոչ ուշ, քան պայմանագրի կնքման օրվան հաջորդող 70-րդ օրը:** |

**Լրացուցիչ պայմաններ՝**

1. *Ծառայության մատուցման ավարտին պետք է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ–ում գործող (Акт о ремонте оборудования выполненного сторонними организациями, Бланк исполнительных документов ТОиР по Акту о ремонте (УД. АТД.09.ОПР.001 ут. 10.02.15г. пр. №534 от 23.08.13г.) փաստաթղթերը և պրամադրի մեկ տարվա երաշխիք (365 օրացուցային օր):*
2. *Ծառայության մատուցման համար թույլատրվում է այն անձնակազմը, որն անցել է վերապատրաստում և սահմանված կարգով նախապատրաստում, հանձնել է հրդեհային անվտանգության(ПБ) և տեխնիկական անվտանգության(ТБ) քննությունները, չունի բժշկական հակացուցումներ և ունի նմանատիպ աշխատանքների փորձ:*
3. *Կապարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի բոլոր աշխատակիցների և այն անձանց ցուցակը, ովքեր պատասխանատու են աշխատանքների կատարման և անվտանգ կազմակերպման համար՝ ըստ կարգագրերի և կարգադրությունների:*

4. Կապարողը պարտավոր է մշակել աշխատանքների կատարման գրաֆիկը, որը պետք է մինչև աշխատանքների սկսելը ներկայացված և համաձայնեցված լինի ՀԱԷԿ-ի հետ:
5. Եռակցման աշխատանքների անհրաժեշտության դեպքում՝ եռակցումը պետք է իրականացվի եռակցման աշխատանքների կատարման իրավունքի համար ատեստավորված եռակցողների կողմից՝ համաձայն ատոմային էներգետիկ տեղակայանքների սարքավորումների և խողովակաշարի եռակցողների ատեստավորման կանոնների պահանջների (ПНАЭ Г-7-003-87) կամ եռակցման արտադրության մասնագետների և եռակցողների ատեստավորման կանոնների պահանջների (ПБ-03-273-99): Եռակցողները պետք է ունենան սահմանված ձևի եռակցողի վկայական:

**Ծանոթություն՝ Պայմանագրի կառավարիչ Ա. Գրիգորյան, հեռ. 010282960, E-mail: ashot.grigoryan@anpp.am**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ |
| ԳՏՏ - ԸՀԳՏ | Տնօրեն |
| Ս. Մաթևոսյան | Ա. Մուրադյան |
| /ստորագրություն/ Կ.Տ. | /ստորագրություն/ Կ.Տ. |

*Հավելված N 1.1*
*«30» 04. 2026թ. կնքված*
***N «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-14/26-03/27»** ծածկագրով պայմանագրի*

Հաստատում եմ
ՀԱԷԿ գլխավոր ճարտարագետ
_______ Ա.Ռ. Գրիգորյան
"08" 01 2026 թ.

**№1 Էներգոբլոկի պահուստային կարգավորիչ փականների (PK-1 2) հիմնական նորոգում շարքից դուրս եկած դետալների փոխարինմամբ 2026թ.**

| № հ/հ | Աշխատանքի անվանումը | Չափի միավ | Քանակը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | №1 և №2 կարգավորիչ փականների (PK-1, 2) քանդում: | հատ | 2 | |
| 2 | №1 և №2 կարգավորիչ փականների (PK-1, 2) արատորոշում, նորոգում, մաշված մասերի փոխարինում: | հատ | 2 | |
| 3 | №1 և №2 կարգավորիչ փականների (PK-1, 2) հավաքում: | հատ | 2 | |
| | **Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պահեստամասերը տրամադրվում են պատվիրատուի կողմից:** | | | |

Վճարումը կատարվում է փաստացի կատարված աշխատանքի համար:

Գլխ. ճարտարագետի տեղակալ վերանորոգումների գծով _______ Մ.Ս. Կարապետյան
02.01.26թ

ՏԱ պետ _______ Հ.Գ. Հարությունյան

ՎՆԿԲ պետ _______ Ա.Ա. Մկրտչյան

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**
**ԳՏՏ - ԸՀԳՏ**
........................ **Ա. Մաթևոսյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ**
**Տնօրեն**
........................ **Ա. Մուրադյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«30» 04 ,2026թ. կնքված*
***N «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-14/26-03/27»** ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50511400 | **№1 էներգաբլոկի պահուստային կարգավորիչ փականների PK-1,2 հիմնական նորոգում՝ շարքից դուրս եկած դետալների փոխարինմամբ** | | | | | **4 620 000** | 4 620 000 | 4 620 000 | 4 620 000 | 4 620 000 | 4 620 000 | 4 620 000 | 4 620 000 | **4 620 000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*
*** Վճարումը կկատարվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով փաստացի մատուցված ծառայության հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**
**ԳՏՏ - ԸՀԳՏ**

...... **Ս. Մաթևոսյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ**
**Տնօրեն**

...... **Ա. Մուրադյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված 3*
*«      »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ________
հհ ______________
հվհհ ______________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ________
հհ______________
հվհհ______________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«      » «              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20   թ.
Պայմանագրի համարը՝  __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      » «                   » 20      թ. դուրս գրված N ________________________ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                  Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                   պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. __________________________-ի և ______________________-ի միջև «--»        20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի    միջև  «—»  20  թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

__________________________________________            ____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«—»         20  թ.